— Ուղղելի ամբախումբ զօրութեանց . . . առ մեօք պատերազմին ... որ զնախնական վարսն յուշացուցեալ մեղկացուցանէ և զճարպըն զերկամամբքն պատեալ՝ ուստի բիւր ազգի ... — Այստեղ դիտել կու տանք որ Բուզանդայ խօսքերը ակնարկութիւն է Պօղոս Առաքելոյ ասածներուն թէ՝ Ոչ է մեզ պատերազմն ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ այսս չարութեան ընդ իշխանի օդոյս այսորիկ (թուղթ առ Կորընթացիս)։ Ուստի քրիստոնեայն հոգւոյն շնորհօք աւելի վեր կը բարձրանայ քան երևելի օդոյս ամբերն, որոց չար ոգին յերկրի ընդ մեզ կը պատերազմի։ Իսկ մնացեալ սրբագրութեանց իմաստն բնագրէն յայտնի է։

70. Էջ 84. տող 21. Այլ մեզ այսր լիցի վայել ....։ — Ուղղ. վայելել։

71. Էջ 84. տող 28. Լի լուսով նորա ... լսելիս ... լսելիք ... ի լսելիս ...։ Բառախաղ է՝ թէ ամենայն ինչ լսելիք են, ամենայն ինչ տեսանելիք են յաստուածակոյս կողմանէ, որում յայտնի են ամենայն։

72. Էջ 86. տող 34. Զայս ամենայն բանս, և որ ... յօրէ յայսմանէ ինչ յաւուրս ...։ — Ուղղ. մինչ յաւուրս ...։ Պայմանադրութեան կապն է։

73. Էջ 90. տող 4. Կաշառաւեկս ...։ — Ուղղ. կաշառաբեկս։

74. Էջ 90. տող 28. Ապա իբրեւ սրտմտեալ ... առաւելիւք նիւթեալ ...։ — Ուղղ. առաւել ես։ Վաղէս միւս եպիսկոպոսաց վրայ չարացեր է, բայց առաւել ևս Ներսիսի վրայ, վասն զի համարէր զնա պատճառ իւր որդւոյն մահուան։

75. Էջ 91. տող 12. Իսաստոմ։ — Ուղղ. Իոստոմ. տես էջ 265։

76. Էջ 91. տող 13. Տիռանամ։ — Ուղղ. Տիրադատ կամ Տրդատ. տես էջ 272, եւս 218, տող 14։

77. Էջ 92. տող 33. Այլ պատճառս միայն առնէ զանուն իւր ի վերայ աներևոյթ մարմնոյն. մանէ ....։ — Ուղղ. այլ պատճառս միայն առնէ՝ զանուն իւր ի վերայ աներեւոյթ մարմնոյն պահէ, և ....։ Այսինքն՝ մահն քրիստոնէի համար աներեւոյթ փոփոխութիւն է, և Տէրն պատճառս միայն առնէ, որպէս զի իւր անունը աներեւոյթ հող դարձած մարմնոյ վերայ պահէ, որ յետոյ այդ մարմնոյ իսկութիւնը իւր արքայութեան արժանացնէ յարութեամբ։

78. Էջ 94. տող 17. Տեսանէր զնա իբրեւ զօր հակառակորդ և թշնամի ....։ — Ուղղ. զիւր հակառակորդ և թշնամի. (և կամ թերեւս զայր)։

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Շարուճակեկի

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ

Բազմավէպ. Մայիս 1906. թ. 5. — « Որ և առ ոյժ կացացի » Փարպեցւոյ էջ 171 ընթերցուածն՝ առաջարկել էի կարդալ. « Որ և անոյժ կամացի արանց լինէր անցանել գիւրաւ ըստ կամի »։ Յարգելի Խմբ. իւր ծանօթութեան մէջ գրեր է իմ առաջարկութիւնն բանագրօսեալ և հակառական բնագրի իմաստի հետ. ուստի առաջարկել է նոր ուղղագրութիւն մը՝ այսպէս. « Որ և առոյգ քաջաձի արանց չլինէր » . . . Բայց թոյլ տուէք վերստին պնդելու իմ առաջարկած ընթերցումի ուղղութեան վերայ, և ցոյց տալ որ ոչ բանագրօսեալ է և ոչ հակառական՝ բնագրի իմաստի հետ, այլ ընդհակառակն։

Հարցը պարզելու համար՝ խնդրեմ պարբերութիւնը ծայրից սկսէք ընթեռնուլ. « Եւ հասեալք յեզր գետոյն սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեանն . . . և տարակուսեալ զօրքն՝ խնդրէին տեղիս անցի, և ոչ գտանէին. և փորձելով ոմանց զբազում տեղիս՝ ընկըղմեալք ի ջուրսն, և հազիւ գտեալ անդրէն ելս՝ ապրէին »։ Մինչեւ ցայս վայր ի դէպ դայ Խմբ. ուղղագրութեան. « որ և առոյգ քաջաձի արանց չլինէր » անցանել և « տարակուսեալք զօրքն՝ խնդրէին տեղիս անցի »։ բազում տեղեր փորձեցին անցնիլ և չկարացին, և ոմանք հազիւ ազատեր են խեղդելէն. ուստի սրտատուչ՝ պղտոր գետի եզերքը կայներ էին, մինչեւ որ կը հասնի « քաջ զօրավարն Հայոց Վահան »։ Անշուշտ նախ հարցուցած կը լինի այդ « առոյգ և քաջաձի » մարդկանց թէ ինչո՞ւ շուարած կանգներ են։ Եւ թէպէտ Խմբ. ուզենայ ծածկել քաջերու երկիւղն. սակայն նոքա անկեղծաբար խոստովանած լինելու են իրենց անկարողութիւնը և վտանգի մեծութիւնը։ Այն առեն քաջն Վահան, առաջնորդակը խթելով ձիու կուշտն՝ կը մտնէ գետի եզերքը. « և տեսանեալ զինքը նշանաւ խաչին սրբոյ կենսատուի՝ իջանէր ի գետն. և որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ՝ անցա-

digitised by A.R.A.R.@

նէր խաղաղութեամբ ընդ ջուրսն. որ և տեղին՝ ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգութեամբ»։ Ահա այն մեծ նշանը զոր գովեստով յիշէ հեղինակն, որ նա անվնաս և աներկիւղ կ'իջնէ գետը, և պղտորեալ ալիքները ճեղքելով կ'անցնի միւս կողմը, իբրեւ ծաղկածիծաղ դաշտի մը միջէն՝ ամենայն խաղաղութեամբ և առանց վտանգի ենթարկուելու։ Բնական է որ այսքան օրինակ՝ գերմարդկային ազդեցութիւն մ'ունեցած լինելու է բոլոր գնդի վերայ, որք սիրտ առած՝ իրարու ետեւ և նոյն ճանապարհով՝ կ'անցնին անհոգութեամբ»։ — Այսուհետեւ կը սկսի մեր ուղղագրութեան հաւաստիքն։ «Եւ այս լինէր նշան մեծ յայտնի»։ Մեծ՝ ոչ այն բանի համար որ քաջն Վահան անցեր էր խաղաղութեամբ, և նորա ետեւից անցեր էին նոյնպէս «առոյգ քաջամի» այրուձին՝ անհոգութեամբ. այլ մեծ և յայտնի նշան յայնմ եղեւ՝ որ Վահան ամեհի պղտոր ալեաց միջէն կարեց անցաւ խաղաղութեամբ «որպէս ընդ յոյժ տեղի ծանծաղ». այնպէս որ տեսողաց թուէր՝ «որ և անոյժ կանացի արանց լինէր անցանել դիւրաւ ըստ կամի», թող թէ ամենայն այրուձիոյն։ Եւ ահա յայտմ է հրաշքի գաղտնիքն և մեր ուղղագրութեան շարժառիթն, որ յուսամ ոչ բռնազբօսեալ է և ոչ հակասական։

*

Բազմ. Անդ. էջ 205. «Խօզակեր»․․․․ «Լաւքն» փարպ. էջ 10։

Այս երկու բառերն աստղանիշ են տպագրութեան մէջ, որովհետեւ ուղղագրական ձեւը կասկածելի է եղեր։ Ես ուղղեր էի «Խօզակեր»ը՝ լօռակեր։ Իսկ «հաւք» բառի համար բացատրութիւն տուեր էի որ տարակուսական չէ, վասն զի ժողովրդեան բերանը՝ հաւքը նշանակում է թանձրամարմին և գիշակեր մեծ թռչունները։ Մանաւանդ որ հատաանունդ մեծղի թռչունները, «Ջաւք», զանազանելու համար գիշակերներից՝ վերջիններս կոչում են Գիլհաւք—գայլահաւք։ — Ուստի խնդրեմ սրբագրել անտեղի «Լաւք» բառը։

Հ. Գ. Ն.

---

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծ. Տ. Նորայր՝ Միսայէլի «ի Ս. Խաչն» ճառէն (Հմմտ. Բազմ. 1906, թ. 4, էջ 161) հրատարակուած պատառիկին հետեւեալ սրբագրութիւնը կ'ընէ։

Միսայէլ ... վկայէ և օտարոտի ահի յաջողս, զհաւս կոչելով՝ որ յարեւելեան կողմանէ. զոր առէ թէ յաջ կողմ գնացես ի տիւ արեգականն, և թէ յահեակ՝ յերեկս կոյս ի խրթինն ...

Այս խօսքերը անուղղակի առնուած են Հոմերոսի Իլիականէն (Գիրք ԺԲ)։ Միսայէլ իր առջեւ ունեցած է Փիլոնի Լինելութեան գիրքը (Հմմտ. Տպ. Վենետիկ, 1826, էջ 5. մասն Ի.) և հետեւեալ տողերէն քաղուած։

Փիլոն ... վկայէ և քերթողն. աջոյ հաւս կոչելով զայնս, որ յարեւելից կողմանէն. և ձախոյ կողմանն զայնս՝ որ յարեւմտից կողմանէն. յորժամ առէ. գի թէ յաջ կողմն գնասցեն ի տիւ և յարեգակն. իսկ թէ յահեակ՝ յերեկս կոյս ի խրթնին»։

Միսայէլի նոյն պատառիկին «խրթանս»ը «խըթան» պէտք է ընթեռնուլ։

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

1. Բանակռիւը հրապարակին վրայ (եռաձայն, հայկական նօթայ, օրկան). — 2. Նախնեաց երգեցողութիւնը. — 3. Խազերը և խազերուն ծագումը։

1. — Գրեթէ տարի մ'եղաւ որ տաճկահայ մամուլը կը զբաղի եկեղեցական երաժշտութեան խնդրով, այնպէս որ արտասահմանի մամուլն ալ կը սկսի արձագանգել։ Մտածուեցաւ անցեալ տարի հայկական նօտա կոչուածը անհետացնել և եւրոպականը ընդհանրացնել դպրոցներու և եկեղեցիներու մէջ. (և այս լաւ գաղափարը յայտնած էր Ամեն. Օրմանեան պատրիարքը)։ Այս առթիւ տեսնուեցան թերթուդէմ յօդուածներ՝ գրուած տիրացուներէ, տէրտէրներէ, որոնց մէջ կային և այնպիսիներ՝ որոնք եւրոպական նօտային առանց գաղափարն ունենալու՝ երգեցողութեան փոխանակման դէմ (այսպիսի խորագրով!) բողոքեցին դէպ ի պատրիարքարան։ Եւ այդ խնդիրը երբ մարեցաւ՝ եռաձայն պատարագը մէջտեղ ելաւ. և օրագիրները նոյն իսկ հանդէսները՝ չյոգնեցան երեք չորս եռաձայն պատարագները միեւնոյն օրը նկարագրելէ։ Այս առթիւ մտածուեցաւ Օրկան կամ երաժշտական գործիք մտցնել եկեղեցին. և այս մտածութեան ամենայն եռանդեամբ դիմադրեցին այն ամէնքը՝ որոնք կը դաւանէին թէ Հայկական եկեղեցին հայկական մնալու համար՝ պէտք չէ նորութիւններ ներմուծէ։ Ըսել է՝ որ եթէ այդ նախանձախնդիրները Ս. Լուսաւորչայ դարէն միշտ եկեղեցւոյ պահապան մնային՝ այսօր չոր պատերով և երկու պատուհաններով եկեղեցի մը պիտի մնար մեզի, ուր Սաղմոսները պիտի քաղէինք։ Եռաձայնի բանակռիւը դեռ հրապարակին վրայ է. հոն են վարդապետներ, տիրացուներ և զաւեշտագրեր (— շատերը իրենց բարեպաշտ համոզումով). և ահա հոն վարդապետ մը գաղափարակից է զաւեշտագրին, տիրա-

digitised by A.R.A.R.@